



Կալիֆորնիայի Պաշտպանության և Փաստաբանության համակարգ

Medi-Cal կառավարվող խնամքի ծրագրեր և հոգեկան առողջության ծառայություններ

Հունվար 2018թ., Հրապ. #5609.10 - Armenian

MEDI-CAL ԿԱՌԱՎԱՐՎՈՂ ԽՆԱՄՔԻ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոգեկան առողջության որոշ ծառայություններ մատչելի են «վճարում ծառայության դիմաց» Medi-Cal¹ մատակարարների կամ Medi-Cal-ի կառավարվող խնամքի ծրագրերի կողմից, մինչդեռ մյուսները տրամադրվում են միայն վարչաշրջանի Հոգեկան առողջության ծրագրերի կողմից՝ հոգեկան առողջության մասնագիտացված ծառայությունների միջոցով:² Հոգեկան առողջության մասնագիտացված ծառայությունների օրինակները ներառում են ինտենսիվ օրական խնամք, երեխաների խնամք և վերականգնողական

¹ Եթե Դուք Medi-Cal-ի «վճարում ծառայության դիմաց» ծրագրում եք, Դուք կարող եք դիմել ցանկացած մատակարարի, ով Medi-Cal է ընդունում: Դա նաև նշանակում է, որ Դուք ներառված չեք Medi-Cal-ի կառավարվող խնամքի ծրագրում: [«Վերադառնալ հիմնական փաստաթուղթ»](#)

² Բարեկեցության և հաստատությունների օրենսգիրք (Welfare & Institutions Code) § 14189 [«Վերադառնալ հիմնական փաստաթուղթ»](#)

ծառայություններ և տարեցների բնակարանային բուժում:³ Հոգեկան առողջության մասնագիտացված ծառայությունների վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար տե՛ս [«Getting Medi-Cal Outpatient Specialty Mental Health Services»](#) հրապարակումը 508401.⁴

Այս հրապարակումը կենտրոնանում է հոգեկան առողջության այն ծառայությունների վրա, որոնք հասանելի են Medi-Cal-ի կառավարվող խնամքի ծրագրերի միջոցով:

Ի՞նչ է կառավարվող խնամքի ծրագիրը:

Կառավարվող խնամքի ծրագիրը առողջապահական խնամքի մատակարարների ցանց է, որը ներառում է հիվանդանոց, բժիշկներ և այլն, որոնք իրենց անդամներին ծառայություններ են մատուցում: Դուք պետք է դիմեք ցանցի ներսում առկա առողջապահական խնամքի մատակարարներին և հաստատություններին, որպեսզի ծառայություններ ստանաք, եթե այն արտակարգ իրավիճակ չէ: Դուք առաջնային խնամքի բժիշկ (PCP, Primary Care Physician) կրնա՞րեք, ով կհամակարգի Ձեր խնամքը և անհրաժեշտության դեպքում Ձեզ կուղղորդի մասնագետի մոտ: Սա տարբերվում է «վճարում ծառայության դիմաց» ընտրանքից, որտեղ Դուք կարող եք գնալ ցանկացած մատակարարի մոտ, ով Medi-Cal ընդունում է:

³ 9 C.C.R. 1810.247 [«Վերադառնալ հիմնական փաստաթուղթ»](#)

⁴ Նաև տե՛ս՝ [Հոգեկան առողջության ծրագրի պարզաբանում](#) [Պատասխանատվություն՝ Medi-Cal-ի հոգեկան առողջության մասնագիտական ծառայություններ տրամադրելու այն նպաստառուներին, ովքեր ներառված են Medi-Cal-ի կառավարվող խնամքի ծրագրերում](#) [«Վերադառնալ հիմնական փաստաթուղթ»](#)

Կառավարվող ինսամքի ծրագիրը կարող է մասնավոր կամ պետական լինել: Կառավարվող պետական ինսամքը ներառում է Medi-Cal-ը և Medicare-ը: Այս հրապարակումը կկենտրոնանա Medi-Cal-ի կառավարվող ինսամքի ծրագրերի վրա:

Medi-Cal-ի կառավարվող ինսամքի ծրագրերի մասին հավելյալ տեղեկությունների համար տե՛ս [«Medi-Cal-ի կառավարվող առողջապահական ինսամքի ծրագրերը: Ի՞նչ են դրանք: Ի՞նչ պետք է իմանամ դրանց մասին»](#): Medi-Cal-ի կառավարվող առողջապահական ինսամքի ծրագրերից ի՞նչ հոգեկան առողջությանն առնչվող ծառայություններ է պահանջվում տրամադրել:

Նախքան 2014թ. Medi-Cal-ի կառավարվող ինսամքի ծրագրեր ստացողները հոգեկան առողջության ծառայություններ էին ստանում PCP-ի իրենց սահմանված կարգի շրջանակներում և ուղղորդվում էին Medi-Cal-ի «վճարում ծառայության դիմաց» մատակարարներին կամ վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրերին՝ հոգեկան առողջության մասնագիտացված ծառայությունների համար: 2014թ. հունվարի 1-ից կառավարվող ինսամքի ծրագրերը պատասխանատու դարձան հոգեկան առողջության ամբուլատոր ծառայություններ տրամադրելու հոգեկան առողջության խանգարումներից առաջացած թեթևից մինչև միջին հոգեկան, էմոցիոնալ կամ վարքագծային խնդիրներ ունեցող անձանց, ինչպես սահմանված է Հոգեկան խանգարումների ախտորոշիչ և վիճակագրական ձեռնարկում (DSM), նույնիսկ երբ այդ ծառայությունները PCP-ի կարգի շրջանակից դուրս են:

[Կալիֆորնիայի առողջապահական ինսամքի ծառայությունների վարչությունը \(DHCS, Department of Health Care Services\) Բոլոր ծրագրերին վերաբերող նամակ \(APL, All Plan Letter\) հրապարակեց 17-018](#): Այս APL-ը քննարկում է կառավարվող ինսամքի ծրագրերում Medi-Cal ստացողներին հասանելի ծառայությունները, ինչպես նաև կառավարվող ինսամքի ծրագրերի պատասխանատվությունը՝ հոգեկան առողջության ծառայությունները վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրերի հետ համակարգելու համար:

Հոգեկան առողջության ամբուլատոր ծառայությունները, որոնք կառավարվող ինսամքի ծրագրերը պետք է տրամադրեն, հետևյալն են՝

- Հոգեկան առողջության անհատական և խմբային գնահատում և բուժում (հոգեթերապիա)՝
- Ամբուլատոր ծառայություններ՝ վերահսկելու դեղերով բուժումը.
- Ամբուլատոր լաբորատորիա, դեղ (կան բացառված դեղեր), բժշկական պարագաներ և հավելումներ.
- Հոգեբուժական կոնսուլտացիա.
- Հոգեբուժական ստուգում՝ հոգեկան առողջությունը գնահատելու համար: ⁵

Առողջական խնդիրները, որոնք հարաբերություններին առնչվող խնդիրներ են համարվում, ինչպիսիք են զույգերի կամ ընտանեկան խորհրդատվությունը, չեն ապահովագրվում:

Բուժման տևողությունը, որը ես կարող եմ ստանալ կառավարվող ինսամքի ծրագրից, ունի՞ ժամանակային սահմանափակում:

Ոչ, այնքան ժամանակ, մինչև որ այն բժշկական տեսանկյունից անհրաժեշտ համարվի:

Ո՞րն է բժշկական տեսանկյունից անհրաժեշտ լինելու չափանիշը:

Բժշկական տեսանկյունից անհրաժեշտության տարբեր չափանիշներ կան: Երեխաների և 21 տարեկանից ցածր երիտասարդ չափահասների համար կառավարվող ինսամքի ծրագրերը պետք է ծառայություններ

⁵ APL 17-018 p. 6, Բարեկեցության և հաստատությունների օրենսգիրք 14132.03 [«Վերադառնալ հիմնական փաստաթուղթ»](#)

տրամադրեն, որոնք անհրաժեշտ են շտկելու կամ բարելավելու երեխայի հիվանդությունը կամ առողջական խնդիրը: ⁶

21 տարեկան և ավելի անձանց համար կառավարվող խնամքի ծրագրերը պետք է ընդգրկեն այն ծառայությունները, որոնք հիմնավորված և անհրաժեշտ են՝ կյանքի պաշտպանելու, կարևոր հիվանդությունը կամ հաշմանդամությունը կանխելու, կամ մեղմացնելու սաստիկ ցավերը՝ ախտորոշման և հիվանդության կամ վնասվածքի բուժման միջոցով: ⁷

Ո՞վ է տրամադրում ծառայությունները:

Չոգեբանը, հոգեբույժը, հիվանդանոցի արտոնագրված սոցիալական աշխատողները և ամուսնության ու ընտանեկան հոգեթերապևտները: Կլինիկայի արտոնագրված սոցիալական աշխատողները, հոգեբանական ասիստենտները և MFP պրակտիկանտները նույնպես կարող են ծառայություններ մատուցել, եթե աշխատում են բժշկի վերահսկողության ներքո: ⁸

Ուիչ ինչե՞ր կարող եմ ստանալ կառավարվող խնամքի իմ ծրագրից:

Դուք կարող եք ստանալ՝

- Չոգեկան առողջության նախնական ստուգում (սքրինինգ)։

⁶ 42 USC § 1396d(r)(5), 22 CCR §§ 51340 և 51340.1 [«Վերադառնալ հիմնական փաստաթուղթ»](#)

⁷ APL 17-018 p. 7 [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁸Տե՛ս՝ [Medi-Cal-ի մատակարարի ձեռնարկ](#) պտտեցնելով իջեք դեպի հոգեբուժական ծառայությունները (psychol): Լավագույն ձև՝ zip ֆայլը բացելու համար: «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

- Ուղեգիր և խնամքի համակարգում՝ հոգեկան առողջության ծրագրերի հետ միասին:
- Գործի կառավարում:

Ի՞նչ տեղի կունենա, եթե կառավարվող խնամքի իմ ծրագրում մերժեն, կրճատվեն կամ դադարեցվեն ծառայությունները:

2017թ. հուլիսի 1-ից սկսած դաշնային նոր կանոնակարգեր ուժի մեջ մտան, որոնք պարտադրում են, թե ինչպես պետք է Դուք բողոքարկեք կառավարվող խնամքի ծրագրում ընդունած որոշումը և/կամ ինչպես կառավարվող խնամքի ծրագրում ուշադրությունը հրավիրեք այլ խնդիրների վրա՝ գանգատարկման միջոցով:

[DHCS-ը հրապարակեց APL 17-006-ը՝ այս նոր ընթացակարգերի վերաբերյալ:](#)

Նաև տե՛ս՝ DRC-ի [«Medi-Cal-ի կառավարվող խնամք՝ Բողոքներ և գանգատարկումներ»](#) ընտրանքում

Այլ ռեսուրսներ.

[«Առողջապահական օրենքի ազգային ծրագիր»](#)

Մենք ցանկանում ենք լսել Ձեզ: Խնդրում ենք լրացնել մեր հրապարակումներին վերաբերող հետևյալ հարցումը և մեզ տեղեկացնել, թե ինչպես ենք մենք աշխատում: [\[Լրացնել հարցումը\]](#)

Իրավաբանական աջակցության համար գանգահարեք 800-776-5746 կամ լրացրեք աջակցության [խնդրանքի ձևաթուղթ](#): Մնացած բոլոր նպատակներով գանգահարեք՝ 916-504-5800 հեռախոսահամարով(Յյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (հարավային Կալիֆորնիա):

Էջ 7` 7

Disability Rights California-ն ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկի համար այցելե՛ք՝

[http://www.disabilityrightsca.org/
Documents/ListofGrantsAndContracts.html](http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html).